

Ավտոմեքենայի ձեռքբերման վարկի տրամադրման ակցիա (Պրեմիում)
Տեղեկատվական ամփոփագիր

Ակցիան գործում է 2018թ.-ի սեպտեմբերի 3-ից մինչև 2019թ.-ի հուլիսի 31-ը ներառյալ

Վարկը տրամադրվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից ՀՀ քաղաքացի և/կամ ռեզիդենտ անձանց (այսուհետ՝ Հաճախորդ)՝ առաջնային շուկայից ավտոմեքենա և այլ անհատական օգտագործման տրանսպորտային միջոցներ գնելու համար:

Վարկի արժույթ	ՀՀ դրամ
Վարկի գումար	15,000,001 - 45,000,000 ՀՀ դրամ չի կարող գերազանցել ավտոսրահի կողմից տրամադրված հաշիվ-ապրանքագրում կամ այլ համապատասխան փաստաթղթում ներկայացված արժեքի 80%-ը
Վարկի ժամկետ	24 - 84 ամիս

Կանխավճարի չափ	Տարեկան ֆիքսված տոկոսադրույք		Տարեկան լողացող տոկոսադրույք
	24 – 36 ամիս ժամկետի դեպքում	37 – 60 ամիս ժամկետի դեպքում	61 – 84 ամիս ժամկետի դեպքում
40% և ավելի	12.5%	13.5%	ԿԲՀՏ* + 3.5
20 - 39%	13.5%	14.5%	ԿԲՀՏ* + 4.5

*ԿԲՀՏ – «Կոնվերս Բանկ» ՓԲԸ հաշվարկային տոկոսադրույք, որը կարող է փոփոխվել յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Ընդ որում՝ գործող վարկերի դեպքում փոփոխված ԿԲՀՏ-ն ուժի մեջ է մտնում ԿԲՀՏ-ի հաստատման ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ից: ԿԲՀՏ-ի մասին կարող եք տեղեկանալ www.conversebank.am կայքից և Բանկում տեղադրված ցուցանակներից/սպասարկման սրահի էկրաններից:

Բանկի արդյունավետ տոկոսադրույք և տարեկան փաստացի տոկոսադրույք

Բանկի արդյունավետ տոկոսադրույքը կազմում է առավելագույնը 17.28% (ներառում է Բանկի կողմից սահմանված վճարները՝ վարկային հայտի ուսումնասիրության վճարը, վարկի տրամադրման վճարը, վարկի սպասարկման ամսական վճարը)

Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է առավելագույնը 23.45% (բացի Բանկի կողմից սահմանված վճարներից ներառում է վարկը ստանալու համար անհրաժեշտ այլ վճարները՝ նոտարական վավերացման վճարը, գրավի իրավունքի գրանցման և միասնական տեղեկանքի վճարները, ապահովագրական վճար)

Վարկի ապահովում

Վարկն ապահովվում է ձեռք բերվող ավտոմեքենայի գրավով: Առանձին դեպքերում կարող է գրավադրվել անշարժ գույք, որպես լրացուցիչ ապահովում Բանկը կարող է պահանջել նաև ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորություն, այլ անշարժ գույք:

Գրավադրվող գույքի ապահովագրություն

Պահանջվում է գրավադրվող գույքի Կասկո ապահովագրություն, որը կատարվում է հաճախորդի կողմից Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների միջոցով՝ ավտոմեքենայի արժեքի չափով:

Երաշխավորի/համավարկառուի առկայություն

Բանկի որոշմամբ Վարկը կարող է տրամադրվել երաշխավորի և/կամ համավարկառուի առկայության պայմանով:

Մարման հաճախականությունը և եղանակը

- Անուիտետային (հավասարաչափ ամսական մարում), որի մեջ փոփոխական մասերով մտնում են մայր գումարը և կուտակված տոկոսները:

- Ձսպանակաձև (փոփոխական ամսական մարում), որի մեջ մայր գումարի մարումը մտնում է հավասար չափով, իսկ կուտակված տոկոսները՝ փոփոխական:
- Խառը - հաճախորդը հնարավորություն ունի ընտրել անհատական մարումների նախընտրելի ժամանակացույց, որի հիմքում ընկած կլինի հաճախորդի ֆինանսական հոսքերի դինամիկան: Այս դեպքում վարկի առավելագույն ժամկետը կարող է կազմել 60 ամիս, և տոկոսները վճարվում են ամսական պարբերությամբ, իսկ մայր գումարները՝ հավասարաչափ 2-ից մինչև 6 ամիս ամսական պարբերությամբ:

Վճարների ցանկ

Վարկային հայտի ուսումնասիրության միանվագ վճար	5,000 ՀՀ դրամ՝ գանձվում է վարկային հայտը մուտքագրելիս
Վարկի տրամադրման վճար	Վարկի գումարի 0.5%, առավելագույնը 150,000 ՀՀ դրամ
Վարկային հաշվի սպասարկման վճար	2,000 ՀՀ դրամ ամսական

Վարկառուի կողմից են կատարվում նաև

- գրավադրվող ավտոմեքենայի Կասկո ապահովագրությունը
- գրավի պայմանագրի նոտարական վավերացման և իրավասու պետական մարմնում գրանցման հետ կապված ծախսերը

Միասնական տեղեկանք	3,000 ՀՀ դրամ
Նոտարական վավերացում	20,000 ՀՀ դրամ
Գրավի գրանցում ճանապարհային ոստիկանությունում	5,000 ՀՀ դրամ
Ապահովագրական վճար	Տարեկան 2.5% ավտոմեքենայի արժեքից

Ապահովագրական ընկերությունների ցանկ

Ապահովագրական ընկերություն	Հասցե	Հեռախոսահամար
«Ինգո Արմենիա» ԱՓԲԸ	ք. Երևան, Հանրապետության փ., 51, 53, տարածքներ 47, 48, 50	(010) 59-21-21
«ՌԵՍՈ» ԱՓԲԸ	ք. Երևան, Կոմիտասի պող., 62 շ.	(060) 27-57-57 (098) 56-07-97
«Ռոսգոսստորախ-Արմենիա» ԱՓԲԸ	ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1	(010) 59-10-10
«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ	ք. Երևան, Վազգեն Սարգսյան փ., 10 շ., «Պիացցա Գրանդե» բիզնես կենտրոն, 110 տարածք	(010) 53-64-94 (060) 50-00-60

Տոկոսագումարների հաշվարկման օրինակ

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Տոկոսադրույքը կիրառվում է նվազող մնացորդի նկատմամբ:

Հետևյալ պայմաններով վարկի դեպքում՝

Վարկի գումար	20,000,000 ՀՀ դրամ
Անվանական տոկոսադրույք	13%
Մարման ժամկետ	84 ամիս
Մարման տեսակ	անուիտետային

Մարումների հետ կապված գումարները կկազմեն՝

Ամսական մարում (մայր գումար + տոկոսագումար)	363,840 ՀՀ դրամ
Ընդհանուր տոկոսագումար	10,562,500 ՀՀ դրամ
Մարումների հանրագումար	30,562,500 ՀՀ դրամ

Սահմանափակումներ

- Վարկի գծով մայր գումարի և կուտակված տոկոսների ամսական մարումների առավելագույն չափը չի կարող գերազանցել Վարկառուի և վերջինիս հետ ընդհանուր տնտեսություն վարող այլ անդամների, առկայության դեպքում համավարկառուի ամսական գուտ եկամուտների 50%-ը (PTI)
Եկամտի վերլուծություն չի պահանջվում 40% և ավելի կանխավճարի դեպքում
- Վարկի դիմելու պահին վարկառուի տարիքի և վարկի ժամկետի գումարը չի կարող գերազանցել 66-ը, իսկ վարկառուի տարիքը պետք է կազմի 23 – 65 տարեկան (տարածվում է նաև երաշխավորի/համավարկառուի վրա)
- Վարկառուն (առկայության դեպքում՝ երաշխավորը/համավարկառուն) չպետք է ունենա գործող ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորություններ/երաշխավորություններ
- Վերջին մեկ տարվա ընթացքում Վարկառուն (առկայության դեպքում՝ երաշխավորը/համավարկառուն) չպետք է ունենա հսկվող դասից բարձր դասակարգված վարկային պարտավորություն/ներ և բոլոր վարկերի գծով հանրագումարային 20 օր և ավելի ուշացումներ (բացառությամբ երաշխավորությունների)
- Ձեռք բերվող ավտոմեքենայի արտադրման տարեթիվը չպետք է լինի 2016-ից ցածր

Տոյժեր և տուգանքներ

**Պայմանագրով նախատեսված մարման ժամկետների խախտում թույլ տալու դեպքում Վարկառուն Բանկին վճարում է տույժ՝ 0.13% ուշացման յուրաքանչյուր օրվա համար:
Վարկի վաղաժամկետ մարման դեպքում տուգանք/միջնորդավճար չի կիրառվում:**

Ուշադրություն

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:
Վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել Բանկի կողմից:

Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարների մարումները ժամանակին չկատարելու դեպքում այդ մասին տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ Կենտրոնական բանկի վարկային ռեգիստր և «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին: Վատ վարկային պատմություն ունենալը հետագայում խոչընդոտում է օգտվել Բանկի կողմից տրամադրվող ֆինանսական գործիքներից:

Վարկային պարտավորությունները պայմանագրով սահմանված կարգով չկատարելու դեպքում Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու բռնագանձել և իրացնել գրավադրված գույքը և գրավի առարկայի իրացումից ստացված միջոցների հաշվին մարել Հաճախորդի վարկային պարտավորությունները:

Հաճախորդի վարկային պարտավորությունները մարելու համար գրավի իրացումից ստացված գումարը բավարար չլինելու դեպքում պարտավորությունները կարող են մարվել Հաճախորդի այլ գույքի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը

1	Վարկային հայտ-հարցաթերթիկ
2	Վարկառուի (առկայության դեպքում՝ համավարկառուի, երաշխավորի) անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայությունների համարանիշ կամ բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տրամադրված տեղեկանք ՀԾՀ չստանալու վերաբերյալ (չի պահանջվում, եթե ներկայացվում է նույնականացման քարտ)
3	Վարկառուի (առկայության դեպքում՝ համավարկառուի, երաշխավորի) ԱՔՌԱ հարցման համաձայնությունը և ԱՔՌԱ հարցումը
4	Ավտոսրահի կողմից տրամադրված հաշիվ-ապրանքագիր կամ համապատասխան այլ փաստաթուղթ
5	Ավտոմեքենայի տեխնիկական անձնագիր (վարկի հաստատումից հետո), որը վերադարձվում է վարկառուին՝ տրանսպորտային միջոցի գրավի պետական գրանցման վկայականը Բանկին հանձնելուց հետո
6	Ավտոմեքենայի սեփականության իրավունքի վկայական (վարկի հաստատումից հետո),
7	Տրանսպորտային միջոցի օտարման նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք (վարկի հաստատումից հետո),

8

Վարկառուի և գրավատուների (եթե տարբեր են) ամուսնության վկայական/ներ/ը (առկայության դեպքում), ամուսնու անձը հաստատող փաստաթղթերը, ԱԲՌԱ համաձայնությունն ու ԱԲՌԱ հարցումը, ընդ որում վարկառուն ու գրավատուն կարող են լինել տարբեր անձինք միայն այն դեպքում, երբ վերջինները հանդիսանում են փոխկապակցված անձինք համաձայն Բանկերի և Բանկային գործունեության մասին ՀՀ օրենքի

9

Բանկի պահանջով՝ այլ փաստաթղթեր

Վարկը տրամադրելու դրական որոշման և մերժման գործոնները

Բանկը հակված է տրամադրել վարկը, եթե՝

- Հայտատուն համապատասխանում է տվյալ վարկի տրամադրման պայմաններին և սահմանափակող դրույթներին,
- Հայտատուն Բանկի պահանջով իր վարկային պարտավորությունը ապահովում է գրավով,
- Հայտատուն գնահատման արդյունքում ճանաչվում է վարկունակ,
- Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը և տեղեկանքները արժանահավատ են և ներառում են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները՝ վարկի նպատակային օգտագործման համապատասխանությունը և հայտատուի վարկունակությունը ստուգելու համար,
- Հայտատուի վարկային պատմությունը դրական է կամ բացակայում է:

Հայտատուի՝ վերոնշյալ պայմաններից ցանկացածին, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ պահանջներին չհամապատասխանելը կարող է հանգեցնել վարկի տրամադրման մերժմանը:

Վարկի տրամադրման վերաբերյալ որոշման մասին տեղեկացնելու ժամկետները

Որոշման կայացումը տևում է առավելագույնը 1 բանկային օր, Հաճախորդը տեղեկացվում է մեկօրյա ժամկետում, Վարկը տրամադրվում է 5 բանկային օրվա ընթացքում:

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ

Էլ. փոստ՝ info@fsm.am

Հեռախոս՝ (+37460) 70-11-11

Ֆաքս՝ (+37410) 58-24-21

Կապ Բանկի հետ

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել:

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել (+374 10) 511 211 հեռախոսահամարով
- Viber՝ +374 95 511 211
- Skype՝ conversebank-callcenter